

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

Լերմոնտովո համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 18-ի նիստի.

գ. Լերմոնտովո

Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Զրիստինե Խառատյանը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1.Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի “Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեն հաստատելու մասին” թիվ 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

գեկ.Մ.Բոլոտինա

2.“ՆՈԱՍ ՕՐՉԱՐԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ԶՈՄՊԱՆԻ” ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գյուղ.մթերքի վերամշակման արտադրամաս և արհեստական լիճ կառուցելու նպատակով հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:

գեկ.Ռ.Խեչումյան

ԸՆԹԱՑԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի “Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեն հաստատելու մասին” թիվ 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը

- գեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց 2023 թ-ի բյուջեում փոփոխությունների անհրաժեշտությունը, ներկայացրեց նախագիծը՝ ըստ հատվածների և նախահաշիվների: Տեղի ունեցան քննարկումներ՝ հարցերին պատասխանեցին՝ համայնքի ղեկավարը և առաջատար մասնագետ-հաշվապահը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N13/

2. ԼՍԵՑԻՆ - “ՆՈԱՍ ՕՐՉԱՐԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ԶՈՄՊԱՆԻ” ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գյուղ.մթերքի վերամշակման արտադրամաս և արհեստական լիճ կառուցելու նպատակով հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին որոշման նախագիծը

- Ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռ.Խեչումյանը:Նա ներկայացրեց, որ տվյալ կազմակերպությանը պատկանող հողամասի նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ

գյուղ.մթերքի վերամշակման և արհեստական լիճ կառուցելու համար այն պետք է լինի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության: Ուստի, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություն: Զննարկումների արդյունքում ավագանու անդամները ընդունեցին որոշում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N14/



ՀԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԻԿ ԶԱԽԱԼՅԱՆ

1. ԱՍԱԴՌՎ ՎԻՏԱԼԻ

2. ԲՈՒՆՏԻՆ ԻՎԱՆ

3. ԽԱՌԱՏՅԱՆ ԶՐԻՍՏԻՆԵ

4. ԿՈՐՈՒՅՈՎ ՎԱՍԻԼԻ